

# ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՐԴԻ ԳԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՅՈՒՄ

### ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ, ՍՈՖԻԱ ԹՈՔՄԱԶՅԱՆ, ՆԱՐԻՆԵ ԶԱԿՈՔՅԱՆ

Ազգային տնտեսության մրցունակության աստիճանը բարձրացնելու համար ամենից առաջ անհրաժեշտ է հաշվի առնել այդ երկրի զարգացման առանձնահատկությունները և ըստ այդմ մշակել այդ նպատակին հասնելու նոր մեթոդներ և ծրագրեր, քանի որ նախկին մոտեցումներն արդեն իրենց սպառել են: 2008 թվականի կեսերին սկսված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը հատկապես ցույց տվեց, որ տնտեսության կարգավորման գործող ձևերը չեն համապատասխանում ժամանակի մարտահրավերներին, և ծագած սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները լուծելու համար նոր գործիքների և մեխանիզմների կենսական պահանջ է առաջացել:

Ինչպես հայտնի է, շուկայական տնտեսության շարժիչ ուժը մրցակցությունն է, որի միջոցով ապահովվում է պահանջարկի արդյունավետ բավարարում, քանի որ այս դեպքում շահում է սպառողը՝ իրեն անհրաժեշտ ապրանքները և ծառայությունները ձեռք բերելով համեմատաբար ցածր գներով ու սեղմ ժամկետներում: Հատկապես ազգային տնտեսությունների առումով մրցակցության մակարդակի բարձրացման աղբյուրներ են տնտեսական աճի արդյունավետ գործոնները, որտեղ զգալի է նորամուծությունների դերն ու նշանակությունը: Այս հանգամանքը պայմանավորված է ոչ միայն և ոչ այնքան զարգացման էքստենսիվ գործոնների սահմանափակությամբ և դրանց օգտակարության սահմանային հնարավորություններով (ի վերջո հնարավոր չէ, օրինակ, 100 հա հողատարածքով կերակրել 10 մլն մարդու, կամ էլ մեկ կովի կաթնատվությունը հասցնել, ասենք, տարեկան 30 հազ. լիտրի): Նման պայմաններում առաջին պլան են մղվում տնտեսական աճի ապահովման որակական միջոցները, որոնց շարքում առաջին տեղը զբաղեցնում են նորարարությունները, որոնց հիմքում ընկած են մարդկային գիտելիքները և հմտությունները (մարդկային կապիտալը): Իսկ վերջինիս ձևավորման երաշխիքը կրթությունն ու գիտությունն է: Ահա թե ինչու, ինչպես ներկայումս, այնպես էլ առավել ևս առաջիկայում զարգացման էքստենսիվ գործոնների սահմանափակության և բնական չվերականգնվող ռեսուրսների սպառման պատճառով մարդկային կապիտալում ներդրումները համարվելու են լավագույնը և ամենաարդյունավետը:

Այս առումով ամենակին պատահական չէր, որ վերջերս կայացած «Նո-

րամուծություններ, մրցակցություն և տնտեսական աճ» գիտական ֆորումի ժամանակ ՀՀ վարչապետը նշեց. «Համաշխարհային մրցակցության ասպարեզում հաղթում են այն երկրները, որոնք համակարգված առաջ են մղում սեփական կրթական ներուժը, ստեղծում են համապատասխան ենթակառուցվածքներ գիտական գործունեության և այդ գործունեության արդյունքների գործնական կիրառության համար: Այս տեսանկյունից Հայաստանն առայժմ չի կարող մրցակցել առաջավոր երկրների հետ, քանի որ երկիրը մրցունակ լինելու համար պետք է ունենա մրցունակ կրթական համակարգ»<sup>1</sup>: Այնուհետև ՀՀ վարչապետը նշել է, որ այդ համատեքստում կրթությունը դառնում է պետության կարևորագույն գործառույթը, իսկ «Գիտելիք-բուհ-տնտեսություն» համակարգի ստեղծումը XXI դարում Հայաստանի համար համարվում է առաջնահերթ պահանջ:

Ասվածի լավագույն ապացույցն է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը, որը վերջին տարիներին հանրապետությունում ամենադինամիկ զարգացող գործունեության տեսակն է: Բացի նրանից, որ այս ոլորտը զարգանում է միայն իրեն բնորոշ առանձնահատկություններով և ներուժով, այն միաժամանակ կարևոր նախադրյալ և բաղադրիչ է դարձել հանրապետության տնտեսության մյուս ոլորտների համար, առանց որի զարգացման և ընդլայնման՝ անհնար է ապահովել այս կամ այն ոլորտի արդյունավետություն և աշխատանքի արտադրողականության բարձրացում: Հենց այստեղ է, որ կրթական համակարգերը բարելավելու և գիտական մշակումների արդյունքներն ավելի ու ավելի մեծ մասշտաբներով և խորությամբ կիրառելու կենսական պահանջ է առաջանում:

Գիտական և գիտատեխնիկական նվաճումները տնտեսության իրական հատվածում օգտագործելու անհրաժեշտ պայման է նաև տնտեսավարող սուբյեկտների նորամուծական գործունեությունը: Հանրապետության տնտեսության նոր որակական աճի անցնելը ավելի է բարձրացնում նորամուծական գործունեության ակտիվացման, երկրի նորամուծական ներուժի նորովի օգտագործման նշանակությունը, ինչն էլ թույլ կտա վերագինել տնտեսության արտադրական բազան, վերափոխել կառավարման համակարգը և առավել արագ զարգացնել հատկապես տնտեսության գիտատար և աշխատատար ոլորտներն ու արտադրությունները: Միայն այդ կերպ է հնարավոր ավելացնել արտահանման մեջ բարձր տեխնոլոգիատար և գիտատար արտադրանքի և մատուցվող ծառայությունների բաժինը, ինչը հանրապետության վճարային հաշվեկշռի բացասական մնացորդի մեղմման հիմնական ուղին է: Ավելին, հանրապետության առջև ծառայած մարտահրավերների հաղթահարման և առաջին հերթին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների վերացման և զարգացման մայրուղին տնտեսական աճի ապահովումն է կրթության և գիտության լավագույն արդյունքների և նվաճումների միջոցով: Ի դեպ, նշենք նաև, որ ՀՀ արտահանումը տարածաշրջանի 6 երկրների շարքում գրավում է վերջին տեղը (տես՝ աղյուսակ 1):

<sup>1</sup> «Как повысить национальную конкурентоспособность» // «Деловой экспресс» (Ер.), 2012, № 23, с. 3.

Հարավային Կովկասի երկրների ներտարածաշրջանային արտահանումն ու ներմուծումը<sup>2</sup>

Երկր-ները	Արտահանում					Ներմուծում				
	Ընդամե-նը մլն դոլար	Հարավային Կովկաս		Հարևան երկրները		Ընդամե-նը մլն դոլար	Հարավային Կովկաս		Հարևան երկրները	
		մլն դոլար	%	մլն դոլար	%		մլն դոլար	%	մլն դոլար	%
<b>2008</b>										
Հա-յաս-տան	1036.5	77.0	7.4	101.8	9.8	4064.0	40.0	1.0	508.2	12.5
Վրաս-տան	127645.9	2664.7	2.1	13675.4	10.7	200202.1	1454.4	0.7	16658.8	8.3
Ադրբե-ջան	47311.1	490.7	1.0	2055.4	4.3	6479.7	51.5	0.8	2305.8	35.6
Իրան	-	-	-	-	-	-	-	-	-	-
Թուր-քիա	127645.9	2664.7	2.1	13675.4	10.7	200202.1	1454.4	0.7	16658.8	8.3
<b>ԸՆԴԱ-մենը</b>	<b>303639.4</b>	<b>5897.1</b>	<b>1.94</b>	<b>29508</b>	<b>9.72</b>	<b>410947.9</b>	<b>3000.3</b>	<b>0.73</b>	<b>36131.6</b>	<b>8.79</b>
<b>2009</b>										
Հա-յաս-տան	673.4	48.4	7.2	63.4	9.4	3144.2	37.9	1.2	349.6	11.1
Վրաս-տան	1132.5	221.5	19.6	471.9	41.7	4372.0	472.4	10.8	1563.3	35.8
Ադրբե-ջան	13738.2	395.0	2.9	1337.6	9.7	5671.1	59.9	1.1	2115.6	37.3
Իրան	-	-	-	-	-	-	-	-	-	-
Թուր-քիա	98179.3	2144.3	2.2	11159.1	11.4	139456.1	1039.5	0.7	8754.6	6.3
<b>ԸՆԴԱ-մենը</b>	<b>113723.4</b>	<b>2809.2</b>	<b>2.47</b>	<b>13032</b>	<b>11.46</b>	<b>152643.4</b>	<b>1609.7</b>	<b>1.05</b>	<b>12783.1</b>	<b>8.37</b>
<b>2010</b>										
Հա-յաս-տան	973.6	48.2	5.0	88.5	9.1	3606.9	49.7	1.4	478.0	13.3
Վրաս-տան	1278.0	176.8	13.8	414.8	32.5	4747.1	568.2	12.0	1746.2	36.8
Ադրբե-ջան	20765.3	411.0	2.0	1480.4	7.1	6092.0	50.4	0.8	2085.1	34.2
Իրան	25418.3	562.6	2.2	8774.4	34.5	53328.5	184.5	0.3	3197.0	6.0
Թուր-քիա	109670.1	2320.7	2.1	13365.1	12.2	185523.7	1158.3	0.6	15205.4	8.2
<b>ԸՆԴԱ-մենը</b>	<b>158105.3</b>	<b>3519.3</b>	<b>5.92</b>	<b>24123.2</b>	<b>15.3</b>	<b>253298.2</b>	<b>2011.1</b>	<b>0.79</b>	<b>22711.7</b>	<b>8.97</b>
<b>2011</b>										
Հա-յաս-տան	1334.3	61.9	4.6	169.2	12.7	4145.3	247.0	6.0	680.7	16.4
Վրաս-տան	1990.8	282.0	14.2	533.3	26.8	6389.0	711.0	11.1	2306.8	36.1
Ադրբե-ջան	26480.2	535.3	2.0	2323.3	8.8	9732.9	89.5	0.9	3193.5	32.8
Իրան	112645.6	440.9	0.4	13142.8	11.7	59421.6	255.0	0.4	3982.1	6.7
Թուր-քիա	134915.3	3156.8	2.3	19845.9	14.7	240838.9	576.7	0.2	18505.6	7.7
<b>ԸՆԴԱ-մենը</b>	<b>277366.2</b>	<b>4476.9</b>	<b>1.6</b>	<b>36014.5</b>	<b>13.0</b>	<b>320527.7</b>	<b>1879.2</b>	<b>0.6</b>	<b>28668.7</b>	<b>8.9</b>
<b>2012</b>										
Հա-յաս-տան	1428.1	81.6	5.7	180.3	12.6	4266.8	49.1	1.1	482.5	11.3
Վրաս-տան	1674.4	310.1	18.5	466.2	27.8	7184.8	741.8	10.3	2511.4	35.0
Ադրբե-ջան	23827.2	570.7	2.4	2217.9	9.3	9641.7	129.9	1.3	3205.2	33.2
Իրան	-	-	-	-	-	-	-	-	-	-
Թուր-քիա	152560.8	3841.7	2.5	28182.1	18.5	236536.9	520.2	0.2	18995.4	8.0
<b>ԸՆԴԱ-մենը</b>	<b>179490.5</b>	<b>4804.1</b>	<b>2.7</b>	<b>31046.5</b>	<b>17.3</b>	<b>257630.2</b>	<b>1441.0</b>	<b>0.6</b>	<b>25194.5</b>	<b>9.8</b>

<sup>2</sup> Կազմվել է հաշվարկվել է [www.armstat.am](http://www.armstat.am) և [www.trademap.org](http://www.trademap.org) կայքերի տվյալնե-րի հիման վրա: **Ծանոթություն.** Իրանի հարևան երկրները՝ Ադրբեջան, Աֆղանստան, Թուրքիա, Թուրքմենստան, Իրաք, Պակիստան, Սիրիա, Հայաստան, Քուվեյթ, Թուրք-իայի հարևան երկրները՝ Ադրբեջան, Բուլղարիա, Իրան, Իրաք, Կիպրոս, Հայաստան, Չինաստան, Սիրիա, Վրաստան, Վրաստանի հարևան երկրները՝ ՌԴ, Ադրբեջան, Հա-յաստան, Թուրքիա, Ադրբեջանի հարևան երկրները՝ ՌԴ, Վրաստան, Հայաստան, Թուր-քիա, Իրան:

Աղյուսակ 1-ի տվյալներից հետևում է, որ 2012 թ. ներտարածաշրջանային արտահանման ծավալներով Հայաստանի Հանրապետությունը Վրաստանին զիջում է 2 անգամ, իսկ Ադրբեջանին՝ շուրջ 7 անգամ: Նման վիճակը Հայաստանի Հանրապետության իշխանություններից և գործարար աշխարհից պահանջում է փնտրել և գտնել արտահանման նոր աղբյուրներ և միջոցներ՝ ավելացնելու ՀՀ արտահանման պոտենցիալը և ծավալները<sup>3</sup>: Իսկ նման հիմնախնդրի լուծման ամենահիմնական և կարևոր պայմանը այնպիսի մրցունակ ծառայություններ և ապրանքներ մատուցելն է, որոնք պահանջարկ կունենան ոչ միայն տարածաշրջանի, այլ նաև աշխարհի մյուս երկրների շուկաներում: Ապրանքների ու ծառայությունների արտահանման ու ներմուծման հաշվեկշռի բացասական մեծությունն ի վնաս ՀՀ-ի պայմանավորում է երկրի վճարային հաշվեկշռի և հատկապես ընթացիկ հաշվի պակասուրդը: Տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1994-2012 թթ. Հայաստանի Հանրապետության ընթացիկ հաշվի մեծությունը եղել է բացասական: Ըստ որում, եթե, օրինակ, 2004 թ. հանրապետության վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի մեծությունը -20 մլն դոլար է կազմել, 2005 թ.՝ -52 մլն դոլար, 2006 թ.՝ -1369 մլն դոլար, 2010 թ.՝ -1137 մլն դոլար, 2011 թ.՝ -1137 մլն դոլար, 2012 թ.՝ -1052 մլն դոլար<sup>4</sup>: Իսկ դա նշանակում է, որ մեր հանրապետությունն ավելի շատ ապրում է ոչ թե սեփական ռեսուրսների ու միջոցների, այլ դրսի հաշվին: Բավական է նաև նշել, որ եթե 2011 թ. ՀՀ-ից արտահանվել է 1334,4 մլն դոլարի ապրանք, իսկ ներմուծվել 4145,3 մլն դոլարի, ապա այդ ցուցանիշները 2012 թ. կազմել են համապատասխանաբար՝ 1428,1 մլն դոլար և 4266,8 մլն դոլար<sup>5</sup>:

Կարևոր է նաև նկատել, որ հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ներկայիս բարդ ու հակասական փուլում առկա հնարավոր թերացումներն ու բացթողումները չեն կարող պատճառաբանվել տնտեսության անցումային բնույթով և առկա «օբյեկտիվ» պատճառներով, ինչպես դա հաճախ ներկայացնում և «հիմնավորում» են առանձին հեղինակներ: Հատկանշական է, որ սոցիալ-տնտեսական անհաջողությունները չի կարելի պատճառաբանել նաև հանրապետության փոքր չափերով, քանի որ, շատ մասնագետների կարծիքով, «փոքր» երկրները նույնիսկ որոշակի առավելություններ ունեն արտահանմանն ուղղված տնտեսության ձևավորման գործում՝ հատկապես պայմանավորված տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունքների արտահանմամբ կամ էլ բնական ռեսուրսների սակավությամբ<sup>6</sup>: Ինչպես վկայում է բազմաթիվ զարգացած երկրների (Սին-

<sup>3</sup> Այդ հիմնահարցին են նվիրված հանրապետության առաջատար տնտեսագետների աշխատանքները (տես, օրինակ, **Վ. Գաբրիելյան**, Տնտեսագիտության և Հայաստանի տնտեսության մարտահրավերները, 2013, էջ 5-12, **Ա. Մինասյան**, Հայաստանի սոցիալ-տնտեսական որոշ մարտահրավերների շուրջ, «Տարեգիրք», 2012, էջ 12-17, **Յ. Սարգսյան**, **Ա. Մարկոսյան**, **Է. Մաթևոսյան**, ՀՀ վճարային հաշվեկշռի բարելավման հիմնախնդիրները, «Տարեգիրք», 2012, էջ 34-57):

<sup>4</sup> Տես «Հայաստան և հարևաններ. 20 տարի թվերով», Եր., 2011, էջ 37-38, «Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2013 թ. հունվար-փետրվարին», Եր., 2013, էջ 105:

<sup>5</sup> Տես «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2012 թ. հունվար-դեկտեմբերին», Եր., 2013, էջ 117:

<sup>6</sup> Տես, օրինակ, **Ա. Ս. Սարիբեկյան**, Հասարակական տնտեսական զարգացման արդի խնդիրները, Եր., 2012, էջ 61-84:

գապուր, Ֆիլիպիններ, ճապոնիա, Հարավային Կորեա, Շվեյցարիա, Ավստրիա և այլն) փորձը, մասնավորապես տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գրանցած հաջողություններն ապացույց են այն բանի, որ նման պատճառաբանություններն անհիմն են և քննադատության չեն դիմանում:

Ներկայումս ՀՀ-ն անհնար է պատկերացնել առանց կրթության և գիտության, տեղեկատվական հեռահաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) ոլորտի արտադրանքի և ծառայությունների լայնածավալ ներդրման և կիրառման: ՏՀՏ-ն ավելին է, քան միայն ծրագրավորումը և կապը: Այն ընդգրկում է նաև նորամուծությունը, էլեկտրոնային հասարակությունը, գիտելիքահենք տնտեսությունը, ինչպես նաև հանրապետության տնտեսության ընդհանուր առաջընթացի, աշխատանքի արտադրողականության բարձրացման և համաշխարհային շուկայում մրցունակությունն ապահովելու հիմնական գործոնները<sup>7</sup>:

ՏՀՏ ոլորտը բնութագրելու համար նշենք միայն, որ այդտեղ 2010 թ. զբաղված են եղել 197 ընկերություններ, որից 125-ը՝ տեղական, ըստ որում՝ 2008 թ. համեմատ նկատվել է այդ ցուցանիշների համապատասխանաբար՝ 13 տոկոսի, 5 տոկոսի և 29 տոկոսի աճ: Արտասահմանյան մասնակցությամբ ընկերություններից 36-ի հիմնադիրները ԱՄՆ-ի և Հյուսիսային Ամերիկայի, 18-ինը Եվրոպայի, 15-ինը Ռուսաստանի և ԱՊՀ մյուս երկրների, 3-ինը այլ երկրների ընկերություններն են: Նման համագործակցությունը հնարավոր է դարձրել ՀՀ ՏՀՏ ոլորտի արտադրանքի իրացումը արտասահմանյան շուկաներում, ինչը համաշխարհային տնտեսությունում նկատվող սուր մրցակցության պայմաններում անչափ կարևոր և վճռական հանգամանք է: Բավական է նշել, որ 2010 թ.-ին արտահանման ընդհանուր ծավալները կազմել են 58.2 մլն դոլար (2008 թ.՝ 69.4 մլն դոլար), որից ԱՄՆ-ին և Հյուսիսային Ամերիկային բաժին է ընկել 40.5 մլն դոլարը (2008-ին՝ 41.0 մլն դոլարը), Եվրոպային՝ 11.1 մլն դոլարը (2008 թ.-ին՝ 12.7 մլն դոլարը): 2008 թ. համեմատությամբ 2010 թ. արտահանման ծավալների նվազումը բացատրվում է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով և դրա հետևանքներով: ՏՀՏ ոլորտը ապահովում է զգալի քանակությամբ աշխատատեղեր (շուրջ 5. 000 մարդ) և ավելի քան 2 անգամ բարձր աշխատավարձ, քան հանրապետության միջին աշխատավարձն է: Ոլորտի նման վիճակը պայմանավորել է նաև հանրապետության հիմնական բուհերում ՏՀՏ մասնագիտություններով ուսանողների զգալի թվաքանակը (2010 թ.՝ շուրջ 7 հազ. ուսանող)<sup>8</sup>:

ՏՀՏ ոլորտում ՀՀ-ի համեմատական մրցակցային առավելություններն են.

- մասնագիտական հմտություններով օժտված և օտար լեզվի տիրապետող երիտասարդների առկայությունը,
- համաշխարհային չափանիշներին համապատասխանող գիտահե-

<sup>7</sup> Տե՛ս, մասնավորապես, **Ջ. Հ. Կարապետյան**, Հայաստանի Հանրապետության տնտեսական աճի գործում տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցության գնահատման հիմնախնդիրները, տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2012, էջ 27:

<sup>8</sup> Տե՛ս «Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ. Ծրագրային ապահովում և ծառայություններ, 2004-2010 թթ.», Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, Եր., 2011, էջ 6:

տագոտական ներուժի առկայությունը, ինֆորմատիկայի, մաթեմատիկայի և ֆիզիկայի բնագավառներում,

- ՏՀՏ և հարակից այլ մասնագիտացումներով բուհական հաջողված ծրագրերը,

- էժան աշխատուժ և ցածր գործառնական ծախսերը,

- պետության կողմից զգալի աջակցություն ուղրտին և պատրաստականություն՝ բարելավելու ներդրումային միջավայրը (հիշեցնենք, որ ՏՏ ուղրտը ՀՀ կառավարությունը սահմանել է որպես տնտեսության գերակա ճյուղ),

- ՏՏ ուղրտի կայուն և շարունակական աճը,

- ուժեղ և գործունյա սփյուռքի ներկայությունը Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում,

- վերազգային խոշոր ընկերությունների հետ համագործակցության մեծ փորձը,

- մտավոր սեփականության պաշտպանությանն ուղղված օրենքները և իրավական ու նորմատիվային այլ ակտերը:

Ազգային տնտեսության մրցունակության մակարդակի բարձրացման համար անհրաժեշտ է բացահայտել տնտեսական գործունեության այն ուղրտները (տնտեսության ճյուղը և դրան հարակից ենթաճյուղերը՝ կլաստերները), որտեղ կատարված ներդրումներն ամբողջությամբ իրենց կարողացնեն և կապահովեն կատարված ծախսերի հետզնուն նորմատիվային ժամանակահատվածում<sup>9</sup>: Միայն այս սկզբունքով տեղաբաշխված ռեսուրսները հնարավորություն կտան հանրապետությանը այս կամ այն կլաստերի առումով առաջատար դիրքեր գրավել համաշխարհային շուկայում: Այս գերխնդրի լուծման գործում առաջնահերթ նշանակություն ունեն պետական և մասնավոր հատվածների հնարավորությունների ու ռեսուրսների միավորումը և դրա հիման վրա արդյունավետ համագործակցության ապահովումը: Ինչպես ցույց տվեց համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամին հաջորդած ժամանակահատվածը, պետության և մասնավոր հատվածի միջև ձևավորվել է համագործակցության նոր մոտեցում: Խոսքը վերաբերում է երկրի տնտեսական զարգացման գործում պետության ազդեցության և միջամտության ավելացմանը, «պետություն-մասնավոր հատված» գործընկերության նոր սկզբունքներին և մեթոդներին<sup>10</sup>:

Սակայն միշտ էլ հարց է առաջացել, թե արդյոք ինչքանով է օրինաչափ, երբ երկրի կառավարությունը այս կամ այն ուղրտը համարում է ա-

<sup>9</sup> Տե՛ս, մասնավորապես, **Է. Ս. Սանամյան**, Հակաճգնաժամային միջոցառումները և դրանց արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում, տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2013, էջ 28, **Ս. Ա. Թադևոսյան**, Փոքր և միջին բիզնեսի դերը արտահանման ծավալների մեծացման գործում (ՀՀ օրինակով), տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2012, էջ 28, **Ա. Հ. Մինասյան**, Արտաքին առևտրի կարգավորման կատարելագործումը (ՀՀ օրինակով), տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2013, էջ 27:

<sup>10</sup> Այդ մասին տե՛ս **Ա. Մարկոսյան, Մ. Մանուկյան**, Առևտրային կազմակերպությունների արդյունավետության բարձրացման հիմնական ուղիները ՀՀ իրական հատվածում, Եր., 2010, էջ 99-113:

ռաջնահերթ կամ գերակա և երկրի համար մեծ կարևորություն ունեցող, քանի որ նախապատվություն տալով այս կամ այն կլաստերին՝ պետությունը, հանձին կառավարության, «խաթարում» է արդար մրցակցության կանոնները, «բնականոն» ձևավորված շուկայական դաշտը և իր վրա է վերցնում լրացուցիչ շուկայական ռիսկեր ու պատասխանատվություն: Ըստ որում՝ գերակայությունների սխալ ընտրության դեպքում այն կղիտվի կառավարության դիրքի «չարաշահում», մասնավոր հատվածի գործունեության նկատմամբ «ոտնձգություն» և վատ կառավարման փորձ, որն իր հերթին առաջ կբերի չարդարացված կորուստներ, ընդհուպ մինչև երկրից ներդրումների և դրամական զգալի միջոցների արտահոսք, կառավարության կողմից վարվող տնտեսական քաղաքականության վարկաբեկում ու ոչ պրոֆեսիոնալ կառավարում<sup>11</sup>:

Եթե ընդունենք այն փաստի առկայությունը, որ ներկայումս հանրապետության ՀՆԱ-ի շուրջ 80 %-ը թողարկվում է մասնավոր հատվածում, ապա դա նշանակում է, որ «պետություն-մասնավոր հատված» համագործակցության ձևաչափը պետք է ավելի մեծ տեղ տա մասնավորին և բացառի այդ փոխհարաբերություններում որոշումներ կայացնելու գործում կառավարության գերիշխող դերը, հատկապես կոնկրետ տնտեսական որոշումներ կայացնելու և խնդիրներ լուծելու ժամանակ: Այդպիսի համագործակցությունն ավելի շատ պետք է հիշեցնի գործընկերային և հավասար հնարավորությունների հարթակ, որտեղ մասնավորը որոշում է այս կամ այն ոլորտի կամ կլաստերի զարգացման հեռանկարները և կանխորոշում է կոնկրետ ներդրումների ուղղությունները և իր վրա է վերցնում հավանական ռիսկերի պատասխանատվությունը: Խնդրի լուծման այսպիսի մոտեցման դեպքում պետության մասնակցությունն ավելի շուտ ենթադրում է համագործակցել տվյալ կլաստերի զարգացմանը, վերացնել վերջինիս խոչընդոտող արգելքները և տվյալ բնագավառի ու դրան հարակից ոլորտների համագործակցության բարենպաստ միջավայր ստեղծել, և դրանով իսկ ինչպես այդ, այնպես էլ տնտեսության մյուս ոլորտների համար ապահովել հավասար մրցակցային պայմաններ, քանի որ միայն այդ կերպ կարելի է հասնել մտածված և կշռադատված տնտեսական քաղաքականության և ապահովել լավագույն արդյունքներ: Այստեղ նկատի ունենք նաև բնակչության զբաղվածության մակարդակի բարձրացումը:

Տարածաշրջանային մրցունակության ասպարեզում Հայաստանը զգալիորեն զիջում է իր հարևաններին (տե՛ս աղյուսակ 2), նորարարության և տեխնոլոգիական զարգացածության ցուցանիշով տարածաշրջանում չի զիջում միայն Վրաստանին (տե՛ս աղյուսակ 3), իսկ ուղեղների արտահոսքի գնահատականով «առաջատարների» շարքում է՝ զիջելով միայն Իրանին (տե՛ս աղյուսակ 4): Բերված տվյալները մեկ անգամ ևս վկայում են, որ համաշխարհային շուկայում մեր մրցակցային դիրքերը բարելավելու նպատակով ինչպես կառավարությունը, այնպես էլ գործարար հատվածը պետք է զգալի ջանքեր գործադրեն հանրապետության մրցունակության առաջխաղացման ուղղությամբ:

<sup>11</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս **Ա. Մարկոսյան**, Պետությունը և շուկան, գիրք առաջին, Եր., 2000, էջ 560:

**Աղյուսակ 2**

**Մրցունակության համաշխարհային համաթիվը<sup>ա</sup>  
2011-2012 թվականներին<sup>12</sup>**

	<b>Կարգը</b>	<b>Միավորը</b>
<b>Հայաստան</b>	92	3,9
<b>Ադրբեջան</b>	55	4,3
<b>Վրաստան</b>	88	4,0
<b>Ռուսաստան</b>	66	4,2
<b>Թուրքիա</b>	59	4,3
<b>Իրան</b>	62	4,3

<sup>ա</sup> Մրցունակության համաշխարհային համաթիվը (ՄՀՀ) ընդգրկում է ազգային մրցունակության միկրոտնտեսական և մակրոտնտեսական հիմքերը: Մրցունակությունը սահմանվում է որպես հաստատությունների, քաղաքականությունների և գործունեների բազմություն, որոնք որոշում են երկրի արտադրողականության մակարդակը: Համաշխարհային մրցունակության ցուցանիշը ընդգրկում է 139 երկիր: Համաթիվը տատանվում է 1-7 միջակայքում, որտեղ 1-ն արտահայտում է մրցունակության ամենավատ, իսկ 7-ը՝ ամենալավ ցուցանիշը:

**Աղյուսակ 3**

**Նորարարության և տեխնոլոգիական զարգացածության ցուցանիշը<sup>բ</sup>  
2011-2012 թվականներին<sup>13</sup>**

	<b>Կարգը</b>	<b>Միավորը</b>
<b>Հայաստան</b>	110	3,1
<b>Ադրբեջան</b>	67	3,5
<b>Վրաստան</b>	117	3,0
<b>Ռուսաստան</b>	97	3,2
<b>Թուրքիա</b>	58	3,6
<b>Իրան</b>	83	3,4

<sup>բ</sup> Նորարարության ցուցանիշը հիմնված է նորարարության արտադրության և նորարարության ծախսերի ցուցանիշների վրա:

**Աղյուսակ 4**

**Ուղեղների արտահոսք\* 2011-2012 թվականներին<sup>14</sup>**

	<b>Կարգը</b>	<b>Միավորը</b>
<b>Հայաստան</b>	103	2,9
<b>Ադրբեջան</b>	78	3,2
<b>Վրաստան</b>	102	2,9
<b>Ռուսաստան</b>	98	2,9
<b>Թուրքիա</b>	97	2,9
<b>Իրան</b>	107	2,7

\*Ուղեղների արտահոսքի միավորը տատանվում է 1-7 միջակայքում, որտեղ՝ 1-ը նշանակում է, որ լավագույնները որպես կանոն լքում են երկիրը՝ հնարավորություններ փնտրելով այլ երկրներում, 7 նշանակում է, որ տաղանդավոր մարդկանց համար երկիրում շատ հնարավորություններ կան:

Պետության և մասնավոր հատվածի համագործակցությունը կարելի է պատկերացնել ինչպես նեղ, այնպես էլ լայն իմաստով: Նեղ իմաստով այդ համագործակցությունը հիմնականում ընկալվում է որպես մասնավորի

<sup>12</sup> «Հայաստան և հարևաններ. 20 տարի թվերով», Սիվիլիթաս հիմնադրամ, Եր., 2011, էջ 30:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 31:

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղը:



գործունեության համար պետության կողմից մակրոտնտեսական բարենպաստ միջավայրի ստեղծում: Սակայն լայն առումով այդ համագործակցությունը ենթադրում է ոչ միայն պետության աջակցություն, այլև գործարարների համատեղ գործունեություն և փոխշահավետ ծրագրերի ու միջոցառումների իրականացում: Ակնհայտ է նաև, որ պետության մասնակցությունը և միջամտությունը տնտեսական գործընթացներին ինչպես տնտեսական ճգնաժամի ժամանակ, այնպես էլ դրա հետևանքները հաղթահարելու ժամանակահատվածում կպահպանվեն: Ու թեև ցածր տնտեսական աճի պայմաններով ՀՀ-ը աստիճանաբար դուրս է գալիս տնտեսական ճգնաժամից, սակայն ակնհայտ է, որ զարգացման արդյունքներն ավելի նշանակալից կլինեն, եթե պետության և մասնավոր հատվածի միջև հաստատվեն փոխշահավետ սերտ կապեր:

Պետք է ընդգծել նաև այն փաստը, որ ՀՀ շուկան փոքր է, բացի այդ, թույլ են զարգացած տարածաշրջանային շուկայական հարաբերությունները հարևան երկրների հետ: Այդ իրողությանը կարող ենք հակադրել պետության և մասնավոր հատվածի համագործակցության ուժը և ավելի կոնկրետ՝ հայ ձեռնարկատերերի գործարարության մշակույթի մակարդակի բարձրացումը, ինչպես նաև միջազգային շուկայի խոշոր սուբյեկտների շրջանակում հետաքրքրությունների առաջացումը որպես փոխշահավետ համագործակցության հիմք: Նշենք, որ այդպիսի օրինակ արդեն առկա է ի դեմս հեռահաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի:

Նկատենք նաև, որ երկրի ազգային մրցունակությանը լուրջ ուշադրություն է դարձվում, որի վկայություններից մեկն այն է, որ մեզանում գործում է Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամը:

Հայաստանի Հանրապետության արտահանման հնարավորությունների ընդլայնման տեսակետից խիստ արդիական և իրատեսական է բարձրագույն կրթության ու դրան հարակից ենթաճյուղերի զարգացումը և ընդլայնումը<sup>15</sup>: Այս տեսանկյունից կարևոր է նկատել, որ տարածաշրջանում Հայաստանն ունի 4.0 միավոր և զիջում է միայն Ռուսաստանին (որն ունի 4.5 միավոր), իսկ Ադրբեջանում այդ ցուցանիշը 4.0 է, Վրաստանում՝ 3.9, Թուրքիայում՝ 4.0, Իրանում՝ 3.9<sup>16</sup>: Այս առումով խիստ արդիական են դառնում բուհի մրցունակության բարձրացման հիմնահարցերը, քանի որ կրթության ու բարձրորակ մասնագետների պատրաստման և որակավորման բարձրացման հիմնական օղակը բուհն է, որ տնտեսությանն ապահովում է բարձրակարգ մասնագիտական կադրերով:

Այսպիսով, ՀՀ տնտեսության զարգացման ներկա փուլում, ինչպես սոցիալ-տնտեսական ներքին հիմնախնդիրների լուծման, այնպես էլ տարածաշրջանային համագործակցության ապահովման մայրուղին ազգային տնտեսության մրցունակության բարձրացումն է: Վերջինիս ապահովման միջոցներն են նորամուծությունների և առաջավոր տեխնոլոգիաների կիրառումը, մարդկային կապիտալի խրախուսումը, ակտիվացումը և հատկապես գիտակրթական պայմանների ստեղծումը:

<sup>15</sup> Տե՛ս **Վ. Փ. Մեյրոյան**, Բարձրագույն կրթության ֆինանսական կառավարման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2013, էջ 30:

<sup>16</sup> Տե՛ս «Հայաստան և հարևաններ. 20 տարի թվերով», Սիվիլիթաս հիմնադրամ, Եր., 2011, էջ 60:

**Բանալի բառեր** – ազգային տնտեսություն, մրցունակություն, նորամուծություն, գիտատեխնիկական նվաճում, մարդկային կապիտալ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, արտահանում, ֆինանսատնտեսական ճգնաժամ, մրցունակության համաթիվ, աշխատանքի արտադրողականություն

**АШОТ МАРКОСЯН, СОФИЯ ТОКМАДЖЯН, НАРИНЕ АКОБЯН –**  
*Актуальные проблемы повышении конкурентоспособности национальной экономики в РА.* – Проводимые в стране реформы и недостатки макроэкономики характеризуют её конкурентоспособность. Уровень же конкурентоспособности страны определяется показателями, принятыми в международных отношениях. В статье на примере показателей платёжного баланса, импорта, текущего счёта, количества занятых в информационной сфере и её объёма, фиксируемых в странах региона (Азербайджан, Грузия, Россия, Турция, Иран), продемонстрирована слабая конкурентоспособность армянской экономики. Сделан ряд предложений, способствующих развитию инноваций и технологий, а также сокращению утечки мозгов. Повышение уровня науки и образования в Армении рассматривается в статье как стимул для повышения конкурентоспособности экономики.

**Ключевые слова:** национальная экономика, индекс конкурентоспособности, научно-технические достижения, человеческий капитал, информационные технологии, экспорт, финансово-экономический кризис, производительность труда

**ASHOT MARKOSYAN, SOFIA TOKMAJYAN, NARINE HAKOBYAN –**  
*Current Issues of National Economy Competitiveness Enhancement in RA.* – Competitiveness of any national economy characterizes social and economical development quantitative and quantitative indices of that country. Moreover, the history of competitiveness index of a country reflects the character of realized reforms, as well as shortcomings, which take place in a microeconomic index.

The authors on the basis of intraregional (Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Turkey, and Iran) comparisons and a number of such indices as weight of export in the total volume of regional export, balance payment, current account, dynamics, the number of employees involved in the sphere of information technologies and indices of volume of its export and other indices have revealed competitiveness weaknesses of Armenian economy. In the paper suggestions stimulating innovations and technological advancement, as well as reducing brain drain have been made. The authors also consider the scientific and educational system as competitive sphere of RA economy.

**Key words** – national economy, competitiveness, innovation, science-technical achievement, human capital, information technology, export, financial economical crisis, index of competitiveness, labour productivity